# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

### ՍԵՊՈՒՀՆ ՎԱՍԱԿ

ԳՈՒՆԴՆ ահեղ հնչէ վրիժագործակ յԱրեաց դրանէն ,
Կորանաց կանգնումն առնել բիւրովք զօրօք հրոսօք .
Ի մարտ մահահոտ մրրկեալ Միհրան զէն յասպազէն
Վերացեալ վարգի հետեւակօք , ձիովք , փղովք .
Հա՛պա մանկտի , զքաջս Հայոց զարթուցէք
Արեամբ ժանտից ըզսուսերս արբուցէք :

Զայն բարձին կարկառք Կանգուարայ , ձայն արձակեաց Կուր .
Վիրք , Հոնք եւ Աղուանք ակնարկեցին առ Հայաստան :
Զարթի՛ք վեհազունք . զարթի՛ք զայրոյթք իմ բոցահուր .
Վասակն եմ Սեպուհ Մամգունեան ձեզ ածելով ձայն ,
Հայո՛ց մանկտի , ձի կալէք ընթացէք
Արեամբ ժանտից ըզսուսերս քամեցէք :

Ո՞յք են սիգախրոխտք հեծեալք եկեալք յԱրեաց դրանէն .
Պաղանք գինեզէնք եւ երիվարք գիշերադեմ ,
Աւագունդ զօրաց ջոկեալ ջոլիր զիրար մրղէն .
Ո՛հ , զիա՛րդ աշխոյժք վառեն զոգիս իմ քաջաճեմ :
Հայո՛ց մանկտի , ձի զճերմակն իմ ածէք
Արեամբ ժանտից ըզսուսերս քաւեցէք :

Ե՛կ պերճասոորդ , ե՛կ ճախրասլաց , ե՛կ իմ ճերմակ
Կրմնեալ ձագուց արծուեաց 'ի Թխոս 'ի կունդ Կանգուար ,
Ե՛կ փայլակնանման օդապարիկդ իմ հրատեսակ
Եւ առ սեւագունդն այն քաջապէս ըզսէր քո տա՛ր ,
Հայո՛ց մանկտի , հեծարուք , զհետ եկէք ,
Յարիւն ժանտից ըզսուսերս շէշտ արկէք :

Հա՛ ասպաստանիկդ իմ հա՛ հա՛ հատ զայդ ասպարէզ . . .
Հասի՛ր . հետեւակք սմբակակոխ անկան տապաստ ,
Հասի՛ր . հեծեալք յետս հարան ծովուց պէս փրփրադէզ ,
Հասի՛ր . փղակոյտն ըզգետնեցաւ իբր առագաստ .
Հայո՛ց մանկտի , հետամուտ լէք հասէք
Յարիւն ժանտից ըզսուսերս մրխեցէք :

Փախիք այծեմունք սատանածին Սասանայ ծնունդք .
Փախերուք 'ի քաջըս Վասակայ դէպ երեսաց .
Հարուած առ հարուած գըլխոցդ իջցեն ծանըր մահունք .
Եւ զի՞ զահանդէք , զի՞ զոփայք , զի՞ կայք ուշագնաց .
Հայո՛ց մանկտի , աղմըկեալք են , հասէք
Յարիւն ժանտիցն ըզսուսերս հետ արկէք :

Ի զուր ձեզ 'ի զուր · Ճանապարհացդ այդ չէք փախուստ ·
Համառօտեցան ձեզ արեւունքըդ թըխաթոյր ·
Սակայն ունիք փառս՝ քաջիս բազկաւ գնալ 'ի կորուստ ,
Հրաճօճ նիզակիս՝ արիւն բերան տալ ըղհամբոյր ,
Հայո՛ց մանկտի 'նդ դիակունս ընթացէք ,
Յարիւն ժանտից ըզսուսերս կրկնեցէք ։

Երթա՛յք վատք արանց առ որ կանխաւ 'ի մէնջ չոգան ,
Առ Խոռեան , Վըշնասպ , Արտավըշնասպ ըսպայս ձեր գոռ ,
Երթայք առ Որմիզդ , առ Արհմնըդ սեաւ և առ Զըրուան ,
Գոչէք , Վասակայ նիզակն է մեզ յուղարկաւոր ։
Հայո՛ց մանկտի , ո՛ն յառաջ եւս անցէք
Նիզակաճօճ մահունս շուրջ սփռեցէք ։

Վահա՛ն իմ եղբայր , երբ՞ում պըրծնուս յերկվարէդ
Զայս իմ բոցավառ տեսեալ դէմք , զայս իմ հուր աչկունք ·
Ի՛ վերին 'ի հրոյն եռանդն անշէջ հար զիս յաւէտ ,
Եւ բորբոքեալ գնամ ուր մահ , ուր փառք , ուր սէրք զուարթունք ·
Հայո՛ց մանկտի , զիս յառաջ անցուցէք ·
Յարիւն ժանտից ըզսուսերս լըցուցէք ։

Այլ յի՞նչ յուսացեալ ինձ պատահէ սկայս անարի ·
Ահագին այս հրոյս ո՞ ժուժայցէ ա՜յ բանդագուշ ,
Ահա եղեցիս . . . եղեր և դու կոճղ անտառի ·
Նիզակս այս կացցէ ինձ յաղթանակ 'ի լանջդ անոյժ ·
Հայո՛ց մանկտի , ինձ նիզակ հասուցէք
Յարիւն ժանտից ըզսուսերս անցուցէք ։

Առ նիզա՛կ Ներսէհ , առ նիզա՛կ չո՛գ փութա՛ դարձիր ·
Պատելով սպառէն զանգէն առիւծս որդիք վատաց ·
Ինձ զէն զօրութեան քաջիս յոգւոջ կայ անձանձիր ·
Հասին ժամք փառաց , Ներսէհ , ինձ չեն պէտք նիզակաց ·
Հայո՛ց մանկտի , առ Ներսէհ ձայն ածէք
Եւ 'ի վերայ քաջացս աստ զիս ցուցէք ։

Ո՜հ , Հայաստան , ո՛հ , ողջամբ կացցես յարեան կարմիրս ·
Ես անժոյժ թըռեայ սլացայ հարի քաջ և հարայ ·
Ես ելեալ երթամ արկանելով զիմ արհաւիրս ·
Ես ելեալ գնացի լի քաջութեամբս յերկրէս վերայ ·
Հայո՛ց մանկտի , գլուխ 'ի վեր կանգնեցէք
Եւ արութիւն 'ի հոգւոյս մաղթեցէք ։

Համբարձէք երկինք զնահատակացըն յաղթանակ
Զեկեղեցազարդ զհայրենավրէժն առաքինեաց ·
Վա՛հանայ եղբայր ես Վարդանայ եղբօրորդեակ
Սեպուհն եմ Վասակ՝ զինուորեալ Տեառըն զօրութեանց ·
Հայո՛ց զուարթունք , ըզքաջաց դահն արկէք ,
Եւ հայրենեացըս դէմ զիս նստուցէք ։

Հ · Ղ · Մ